չատակ Կոստանդիանոսի թագաւորին և Եղիայի Կի-
բակի ասի աւուրս։ Եւ երեկոյի ժամուս, որում գա-
յին յամենայն կողմանցն հրաւիրեալքն ի հարսանիս՝
ի տուն Խոճա Պալէ, վարձելով զնա, անդ առնելով
զընթրիս մեր։ Եւ սկսաւ առնել անձրև մեծ՝ մինչև
յառնել հեղեղաց. ոչ կարացաք նստուցանել ի պար-
տիզի անդ, այլ նստան ի տունս և ի թախտս տանցն
այնմ մի ի վերայ միոյ՝ հրաւիրեալքն ամենայն։

Եւ առաւօտուս Բշի (22 Մայիս) պաշտօն արարեալ
վարդապետացն և քահանայիցն յեկեղեցի Սրբոյն Նի-
կողայոսի և զպատարագն արգիլեալ, և մեր հասեալ
անդ ամենայն հրաւիրակօք անդ ի Սուրբ Նիկողայոս,
և ձայնեցին զվարդապետքն յեկեղեցին, յորս էր Յո-
վաննէս վարդապետն Մուղնեցի՝ առաջնորդ և վերա-
տեսուչ այսմ նահանգի և Գաբրիէլ վարդապետն նը-
ւիրակ Սուրբ Էջմիածնի, և կրօնաւորն սրբասնունդ՝
Տէր Յովաննէս եղբայր և աշակերտակից սոցին՝ և շի-
նօղն վկայարանի Սրբոյն Հռիփսիմեայ և Գայիանեայ,
զոր և ի ժամ հիմնարկութեան յայտնեալ լինին[1]) նըշ-
խարք սուրբ կուսանացն մեծասքանչ հրաշիւ, մինչ
էր Փիլիպպոս կաթողիկոսն ի քաղաքս մեր, որ և սուրբ
հարք և վարդապետք ուխտին և վանիցն Էջմիածնի
առեալ տրակ և նամակ ողջունի և երկրպագման սուրբ
հօրն Հոգևորտիրի և ծանուցեալ թէ Այսպիսի հրաշիւ
մեծի յայտնեցան[2]) նշխարք սրբոց կուսանացն Հռիփ-
սիմեանց. զի և էր օրս յիշատակ և տօն նոցա, որ և
սոցին բարեխօսութեամբ բարերարն Քրիստոս հեղցէ
ծաւալմամբ զշնորհս ողորմութեան իւրոյ յիւր հաւա-
տացեալսն և մանաւանդ նըւաստիցս, որ կամք հան-
դէպ յահեղ սուրբ պատարագիս, ամէն։ Եւ կային անդ
միաբանք ևս ուխտից և քահանայք և ժողովուրդք

1) լինի. 2) յայտնեցաւ.